



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

09.01.2017թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
Պարոն Գաբրիել Գյոզայանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի՛ պարոն Գյոզայան,

«Հետքը» հոդված է պատրաստում մարզերի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման վերաբերյալ կառավարության տրամադրած աջակցության մասին: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ՀՀ կառավարությունը 2016թ. որքա՞ն գումար է հատկացրել Արագածոտնի մարզին:
2. Նշված ծրագրի ու հատկացված գումարի շրջանակում ի՞նչ աշխատանքներ են կատարվել, ո՞ր համայնքներում (նշել համայնքը, որտեղ կատարվել են աշխատանքները, գումարի չափը և կապալառու կազմակերպության անվանումը):
3. Ի՞նչ եղանակով է ընտրվել կապալառու կազմակերպությունը:
4. 2016թ. նախատեսված ծրագրերն ավարտվե՞լ են: Եթե ոչ, ապա որ համայնքներում և ինչ պատճառով:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան

«Արագածոտնի մարզպետ»	Երբ
աշխատակազմի	09 01 2017թ.
Մուտք № 5/11-17	



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51

0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51

0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

N

Ձեռ' 09.01.2017 թ. թիվ 5/11-17 գրության

<<Հետաքննող լրագրողներ>> ՀԿ-ի

<<Հետք>> թերթի լրագրող

Գրիշա Բալասանյանին

Մարզի առաջնահերթ լուծում պահանջվող խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ Կառավարության կողմից 2016թ ընթացքում մարզին հատկացվել է 197998,5 հազար դրամ գումարներ, որից կարկտահարությունից տուժված բնակիչներին ոռոգման ջրի պարտքերի մարման համար աջակցություն 175453,5 հազար դրամ գումար, որն էլ սահմանված կարգով ամբողջությամբ հատկացվել է 19 համայնքների/ Աշտարակ, Փարպի, Ուշի, Օհանավան, Կարբի, Արտաշավան, Ագարակ, Արագածոտն, Բազմաղբյուր, Ն.Եդեսիա, Կոշ, Բյուրական, Սասունիկ, Օշական, Ուջան, Աղծք, Ոսկեվազ, Ոսկեհատ, Հարթավան/ ոռոգման ջուր սպասարկող 5 ջուր օգտագործող ընկերություններին:

Հեղեղի և քամու վնասները հատուցելու համար հատկացվել է 22545,0 հազար դրամ գումար, որն էլ սահմանված կարգով հատկացվել է մարզի 1 համայնքին / Արագածոտն/տանիքների վերանորոգման համար նյութեր ձեռք բերելու նպատակով, 4 համայնքներում/ Աշտարակ, Սասունիկ, Օհանավան, Կարբի/ հակակարկտային կայաններ տեղադրելու համար, իսկ 3 համայնքներում /Արագածոտն, Աղծք, Ոսկեվազ/ դրամական օգնությամբ օժանդակելու համար:

Նախատեսված ծրագրերն 2016թ ընթացքում ավարտվել են:

Հարգանքով՝

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ